

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ՏՈՄԱՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՌԿԱ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ¹

Գ. Ս. ՄԻՄՈՆՅԱՆ, Ռ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վերլուծենք 11-րդ դարի վերջերին և 12-րդ դարի սկզբներին օգտագործված թվականության համակարգերը, որոնք առկա են Հովհաննես Սարկավագի տոմարական ժառանգության մեջ:

Հովհաննես Սարկավագն իր «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»-ի առանձին հատվածներում, ինչպես և հետագայում գրած նամակներում, որտեղ մեկնել է ժողովածոյում տեղ գտած շրջանառվող և իր ներդրած տոմարի խրթին հարցերը, անդրադարձել է բազմաթիվ թվականության համակարգերի, բացահայտել դրանց օրինաչափություններն ու արտացոլել կապը հայոց թվականության համակարգերի հետ: Հարկ է նշել, որ նախորդ շրջանում գրված հետազոտություններում գրել ենք Հովհաննես Սարկավագի կողմից ներդրված առանձին թվականների մասին: Այստեղ մեր խնդիրն է՝ քննարկել ու վերլուծել իր օգտագործած թվականները և բացահայտել իր բերած նորությունները:

Թվականության համակարգերի քննությունն սկսենք Հայոց Մեծ թվականից: Այն Սարկավագը բնորոշել է իբրև «Բուն թոական հայոց»՝ «...դի մուտ բոլորին յապրիելի չորիցն է եւ աւրն երեքշաբթի, թոեա ինն խորան և ի տաս կանոնին ապրիելի չորս և աւրն հինգշաբթ, որ է բուն թոականին սկիզբն»²: Այն Շ-եակի վրա հիմնված հայոց թվականության համակարգն է, որի հաշվման իմաստով առաջին տարին, ըստ Զատիկի տոների, 553 թվականն է՝ ապրիլի 13-ի լրման տարին, իսկ 10-ը՝ 562-ը, ապրիլի 4-ի լրման տարին:

Մեր խնդրի քննության համար բերենք Արևի խավարման մասին ականատեսի՝ Հովհաննես Սարկավագի վկայությունը. «Յայսմ խաւարման արեգականն էր թոական հոմեացոց Փոքրն ՅԼԳ (333) և հայոցն նոյնպէս Փոքրն ԻԹ (29), երկրորդ ժամուն, ի քսաներորդ մարտի, աւուրն չորեքշաբթոջ ի սուրբ քառասնորդացն, ի հինգերորդ շաբաթին խավարեցավ արեգակն: Եւ էր շինութեան քաղաքին Հոռովմայ՝ ՌՊԿէ (1867) ամ, իսկ ի Դիոկղետիանոսէ ՊԼ (830) ամ: Եւ Անտիոք քաղաքի շինութեան՝ ՌԿԳ (1063)

¹ Սույն հոդվածը հրատարակվում է 13-6D381 ծածկագրով՝ «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմությունից» թեմայի շրջանակում:

² Տե՛ս Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1958, էջ 226:

ամ¹: Եւ Կիւրղոս քաղաքի՝ Ռենիե (1425): Իսկ ի գալստենէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ՌՃԺԵ (1115) ամ ըստ հաստատուն և ճշմարիտ համարոյ: Եւ յԱղամայ ՅՅԺԳ (6313) ամ ըստ ելթանասնիցն թարգմանութեան, արեգ ամսոյ ի մետասան կամ որպէս արոեստ կարգն ունի Նաւասարդի ի ելթն, միով աւուրբ առաջ քան զհասարակաւորութիւն տունջեան և գիշերոյ, ի ՆՀԳ (473) ոլոմպիադին՝ յառաջնում ամին ըստ համարոյ յունաց: Եւ էր բուն թոական հայոց ՇԿԲ (562), ի ՃՂԴ (194) ոլոմպիադին, ի չորրորդում ամին: Եվ էր ծնունդն Քրիստոսի ՅԼԳ (333) ոլոմպիադին, յառաջին ամին եղաւ թոականն հայոց:

Ի կուսական արգանդէ յայտնութեան բանին աստուծոյ մինչև ի սկիզբ հինգհարիւրեկին են ամք ՇԿԲ (562), և երկուհարիւրեկին և ի ինսունհինգեկին դրութեան՝ ինն ամ, և ի հոռմ թոականին ի սկզբանէ յԺԳ: Ոմանք յերիս ամս աւելորդ մուծանեն ի ներքս ի մեջ ամացդ՝ որք ասեն ՇԾԶ (556) ի ծննդենէն տեառն մինչ ի սկիզբն հայ թոականին. բայց ոչ այդպէս, այլ ՇԾԳ (553) ամ ի գալստենէ փրկչին մինչի ի հայոց թոական դրութիւն, ինն ամով գկնի երկուհարիւրեկին առատմանն, ի չորեքտասան ապրիկի լրմանն»²:

Քանի որ Հովհաննես Սարկավազի օգտագործած որոշ թվականության համակարգերի օրինաչափություններն ու նրանց առանձնահատկությունները առավել հստակորեն են արտացոլված Ռ. Վարդանյանի կազմած աղյուսակում³, բերենք այդ աղյուսակը:

№	Ձուգահեռ թվականները	Թվականներից ստացված մն.	19-ամյակի հմպտ. տարվա լուսնի լր.	19-ամյակի 1-ին տարվա լուսնի լր.
1	333 (Յոռմեական Փոքր թվ.)	10	A 4	A 13
2	29 (Յայոց Փոքր թվ.)	10	A 4	A 13
3	1867 (Յոռմ քաղաքի շին. թվ.)	5(-4)	A 4	A 4
4	830 (Դիոկղետիանոսի էրա)	13(-1)	A 4	A 5 (6)
5	1[1]63 (Անտիոքի շին. թվ.)	4(-3)	A 4	A 4
6	1423 (Կիւրղոս քաղ. շին. թվ.)	19(+1)=1	A 4	A 4
7	1115 (Քրիստ. Յայկական թվ.)	13(-3)	A 4	A 13
8	6313 (Արարչ. 70-ից թվ.)	5(-4)	A 4	A 4
9	562 (Յայոց Մեծ թվ.)	11(-1)	A 4	A 13
10	1889 (473-րդ օլիմպ. 1-ին տ.)	8	A 4	A 2
11	1113 (Քրիստ. ներկա թվ.)	11(-1)	A 4	A 13

¹ Անտիոք քաղաքի շինության թվականը ՌԿԳ-ն պետք է սրբագրել՝ ՌԵԳԿ, որին կանդրադառնանք հետագա քննության մեջ:
² Լուսնի լրման և [Արևի] խավարման մասին, Ա. Աբրահամյան, ԳԶՎ. աշխ., էջ 278-279:
³ Ռ. Վարդանյան, Յայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), Եր., 1999, էջ 264:

Լուսնի լրման և Արևի խավարման մասին պատառիկի տեղեկություններով ստանանք Հայոց Մեծ թվականի, այն է՝ 562-ի, ներկա թվականի համարժեքը: 562-ին քառասնորդաց պահքի չորեքշաբթին, Նաւասարդի 27-ը (Հայոց շարժական տոմարով), մարտի 19-ը (Հռոմեացոց անշարժ տոմարով) հավասար է 1113 թվականին: Հովհաննես Սարկավազը մեկ տարի ավելացրել է Հայոց Ծ-եակի թվականի վրա, որը երևում է Հայոց շարժական տոմարի Նաւասարդի 27-ի ցուցումով, ինչպես և Հայոց Մեծ և Հայոց Փոքր (Սարկավագադիր) թվականների տարբերությունից, այն է՝ 533 (562-29):

Նա բացատրել է այդ փոփոխությունների պատճառը. «...Որքան առնու զաւարտ ՌՆԿ (1460) ամքն, լինի դարձեալ թիւ մի յաւելոած, որ թողուլ պատշաճ է»¹, ապա խմբագրել է Ծ-եակի կանոնը:

Հեղինակը գրում է, որ Հայոց Մեծ տոմարի 452-ը տարում (= ՃԺԳ նահանջի տարի՝ 113 X 4)՝ 1460 տարի հետո, գարնանամուտը համապատասխանեց Նաւասարդի 1-ին, և Հայոց թվականը 1-ով ավելացավ, որովհետև Հայոց շարժական տոմարի տարին մշտապես ունեն 365 օր, իսկ հուլյան տոմարինը՝ յուրաքանչյուր չորրորդ՝ նահանջի տարում 1-ով ավելանում էր՝ դառնալով 366: Հայոց շարժական տոմարում 1460 տարիների նահանջների կուտակման հետևանքով (365 X 4), առաջանում էր ևս մեկ տարի, այսինքն՝ հուլյան 1460 տարին հավասար է Հայոց շարժական տոմարի 1461 տարու²: Այդ է պատճառը, որ Սարկավազը բացահայտել ու քննարկվող հատվածի մեջ ներդրել է Հայոց Ծ-եակ 561 թվականը՝ դարձնելով 562: Նկատենք, որ Անանիա Շիրակացին իր կազմած Զատկացուցակում ամիսներով ու ամսաթվերով (Նաւասարդ, Հոռի ևն) է ցույց տվել այդ երևույթը³, իսկ Հովհաննես Սարկավազը առաջին անգամ բարձրաձայնել է ու մեկով ավելացրել Հայոց թվականը: Ասենք նաև, որ Ա. Շիրակացու Զատկացուցակի հռոմեացոց շարքի որևէ թվականից ներկա թվականն ստանալու համար միշտ գումարվում է 552 հաստատունը, իսկ Հայոց շարքի այն թվերից, որոնց ամսաթվերն ընկնում են հաջորդ տարվա (Նաւասարդ ևն), ամիսների վրա, տվյալ թվականից ներկա թվականն ստանալու համար գումարվում է 551 հաստատունը, իսկ թվականը 19-ի վրա բաժանելուց հետո ստացված մնացորդից հանվում է 1:

Այսպես է նաև Հովհաննես Սարկավագի մոտ: Բերված օրինակում $1113-562 = 551$, որովհետև 1 տարի ավելացրել է Հայոց թվականի վրա, իսկ

¹ Նորին (Յովհաննու) Առ Սարգիս, տես Ա. Աբրահամյան, Գշվ. աշխ., էջ 263:

² Յաղագս ամսոց հայոց եւ տաւնից, տես Ա. Աբրահամյան, Գշվ. աշխ., էջ 281-282:

³ Տես Ծ-եակի հայոց շարքի թվերը՝ Լ. Սարգսյան, Ռ. Վարդանյան, Գ. Սիմոնյան, Ծ-եակի (շլթ) կարգ (բոլորակ) հռոմեացուց և հայոց Անանիայի Շիրակացու (Շիրակուցու) (վերականգնություն), Աստվ. ֆակուլտետ, Տարեգիրք Դ, Եր., 2009, էջ 43-55:

562-ը բաժանելով 19-ի՝ մնացորդից հանում ենք 1, որպեսզի գտնենք ճիշտ լրման օրը: Հովհաննես Սարկավազը բազմիցս հիշեցնում է «...Թողու՛ր զաւելորդն ի թոականէն զմի թիւն և ուղղապէս վարիլ»¹, կանոն է սահմանել, թե հայոց ավելացած մեկ տարին կա՛մ պետք է հանել Ծ-եակի տարիներից՝ անկախ նրանից 1-ին թե 2-րդ շրջապտույտի համար են, կա՛մ 533 տարի հետ գնալ, որպեսզի գտնվի հայոց շարժական տոմարի, ինչպես և Ծ-եակի ու իր ստեղծած անշարժ տոմարի տարին և լրման օրը: Դրա լավագույն օրինակը բերել է Արևի խավարման մասին պատառիկում, որտեղ հայոց Մեծ թվականի և Փոքր թվականի տարբերությունը 533 (562-29) տարի է: Այնտեղ լրման օրերը համապատասխանում են Ծ-եակի՝ հաշվման իմաստով 10-րդ տարվա՝ ապրիլի 4-ի լրման տարուն՝ հաշված 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարուց:

Վերը տեսանք, որ Արևի խավարումը տեղի է ունեցել Քրիստոնեական Դիոնիսյան կամ ներկա թվականի 1113-րդ տարում, որն իբրև բացարձակ թվական, կասկած չի հարուցել տոմարագետների մոտ, սակայն Արևի խավարման մասին տոմարական պատառիկում գրված է քրիստոնեական երկու այլ թվականների մասին, որոնցից մեկը տրված է մի դեպքում՝ Արևի խավարման համար բերված մյուս համաժամանակյա թվականներին զուգահեռ, այն է՝ «Իսկ ի գալստենէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ՌձժԵ (1115) ամ ըստ հաստատուն և ճշմարիտ համարոյ», իսկ հիշյալ և մյուս քրիստոնեական թվականը՝ հայոց մեկ և մինչև հայոց թվականի կտրվածքով, այն է՝ «Ոմանք յերիս ամս աւելորդ մուծանեն ի ներքս ի մեջ ամացո՛ր որք ասեն ԾԾԶ (556) ի ծննդենէն տեառն մինչ ի սկիզբն հայ թոականին. Բայց ոչ այդպէս, այլ ԾԾԳ (553) ամ ի գալստենէ փրկչին մինչ ի հայոց թոական դրութիւն...»²: Ասենք նաև, որ «Պատճէն տոմարի Հայոց»-ի խմբագրությունների մեջ հանդիպում ենք Քրիստոնեական թվականները ստանալու հետևյալ երեք կանոններին՝

1. Վերցրո՛ւ 552 հաստատուն թիվը, գումարի՛ր հայոց թվականը, կստանաս Քրիստոնեական թվականը՝ «Կա՛լ ԾԾԲ (552), եւ զՀայդ՝ Քրիստոսին է»³, «Ի Քրիստոսէ մինչեւ առ մեզ կա՛լ ԾԾԲ (552), զՀայ թոականն ի վերայ բե՛ր, և այն է»⁴:
2. Վերցրո՛ւ 556 հաստատուն թիվը, գումարի՛ր հայոց թվականը, կստանաս Քրիստոնեական թվականը:

¹ Նորին (Յովհաննու) Առ Սարգիս, տես Ա. Աբրահամյան, ԳՂՎ. աշխ., էջ 263:

² Լուսնի լրման և [Արևի] խավարման մասին, Ա. Աբրահամյան, ԳՂՎ. աշխ., էջ 279:

³ Պատճէն տոմարի (Է-ժե դդ.), աշխ.՝ Ջ. Էյնաթեանի և Գ. Տէր-Վարդանեանի, Եր., 2002., էջ 166:

⁴ Նույն տեղում, էջ 171:

3. Վերցրո՛ւ 553 հաստատուն թիվը, գումարիբ հայոց թվականը, կատանաս Քրիստոնեական թվականը՝ «Անտի (Փրկչի ծնունդից- Գ. Ս.) մինչև ի հայ թոականին դիր՝ ՇԾԳ (553)»¹ կամ «Կա՛լ ՇԾԳ (553) և զհայդ՝ կենարարին է»²:

Համառոտակի ներկայացնենք հայոց մեջ քրիստոնեական երեք թվականների սկզբնավորման և օգտագործման պատկերը:

Առաջին կանոնի ստեղծողն Անանիա Շիրակացին է, որը Շ-եակ Զատկացուցակ կազմեց հոռմեացոց ու հայոց շարքերով 1-550 թվականների համար՝ հոռմեացոց շարքի յուրաքանչյուր տարուն գումարելով 552 հաստատունը, որով ստանում ենք քրիստոնեական Դիոնիսյան կամ ներկա թվականի համարժեքը: Հայոց շարքի համար կրկնվում է նույն պատկերը: Բացառություն են կազմում այն տոնական կանոնները, որոնց տարին սկսում են Նաւասարդից ևն: Շ-եակի վերականգնման մեջ դրանք նշված են աստղանիշներով³, որովհետև Շ-եակի թվերը Շիրակացին չէր կարող փոխել, ուստի պետք է արտահայտեր հաջորդ տարվա ամսաթվերով:

Անանիա Շիրակացու ստեղծած հաստատունն օգտագործել են Հովհաննես Կոզեռնը և Ասողիկը, ինչպես նաև կիրառված է ուշ շրջանում ընդօրինակված պատճեններում:

2-րդ կանոնի ստեղծողն անհայտ է: Այն Ռ. Վարդանյանը գտել է Անիի կաթողիկեի շինարարական արձանագրության համաժամանակյա թվականների վերլուծության միջոցով: Արձանագրությունը գրվել է 1009 թվականին, իսկ Անիի կաթողիկեն ավարտել են 1002-ին, այսինքն՝ քրիստոնեական թվականի 2-րդ տարբերակի սկզբնավորումը կարելի է կապել 10-րդ դարի վերջերին 11-րդ դարի սկզբներին ստեղծված Անիի գրչության դպրոցի հետ⁴: Ուշագրավ է, որ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի թղթյա հնագույն ձեռագրում⁵ գտնում ենք մի ժամանակագրություն՝ սկսած Քրիստոնեական 1 թվականից և ավարտված Քրիստոնեական 556 թվականով, որի շարունակությունն սկսում է հայոց մեկ թվականով՝ համարժեք 556-ին, և ավարտվում Պետրոս Գետադարձի 23-րդ տարով (=1043

¹ Նորին [Յոհաննու քահանայի]՝ ժամանակագրություն, տե՛ս Ա. Աբրահամյան, Եզվ. աշխ., էջ 279:

² «Մեկնութիւն տունարիս Յայկագնեայ» աշխ., տե՛ս Ա. Աբրահամյան, Եզվ. աշխ., էջ 215:

³ Տե՛ս Շ-եակի հայոց շարքի թվերը՝ Լ. Սարգսյան, Ռ. Վարդանյան, Գ. Սիմոնյան, Շ-եակի (ՇԼԲ) կարգ (բոլորակ) հռոմեացուց և հայոց Անանիայի Շիրակացույ (Շիրակունույ) (վերականություն), Աստվ. Ֆակուլտետ, Տարեգիրք, Դ, Եր., 2009, էջ 43-55 և Լ. Սարգսյան, Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը, Եր., 2010, էջ 223-235:

⁴ Ռ. Վարդանյան, Անիի Կաթողիկեի արձանագրության համաժամանակյա տարեթվերը, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 2000, թիվ 1:

⁵ Մատենան գիտութեան եւ հաւատոյ Դաւթի քահանայի, Եր., 1997, էջ 239:

թ.) և Միքայել Պոգոնատի 4/5-րդ տարով (= 1038/9 թ.), ուստի կարելի է ասել, որ այդ քրոնիկոնն ավարտվել է 1042 թվականից ոչ ուշ¹:

Այդ բնագրում, ինչպես նշվեց, հայոց 1 թվականը համադրված է 556 քրիստոնեական թվականին, այսինքն՝ 2-րդ տարբերակի համաձայն, որը ինչպես տեսանք վերևում, քննադատում է Հովհաննես Սարկավազը՝ նշելով, թե իր ընդունած քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակը Քրիստոնեական թվականի 2-րդ տարբերակից 3 տարի ավելի է: Պարզ է, որ քրիստոնեական թվականի այդ տարբերակը Հովհաննես Սարկավազից առաջ գոյություն է ունեցել ու կիրառվել:

Քրիստոնեական թվականի 2-րդ տարբերակի կանոնը՝ 556 հաստատունով ըրված է «Պատճէնների» հետագա ընդօրինակությունների լուսանցքում: Դա նշանակում է, որ այն շրջանառությունից դուրս էր եկել 13-14-րդ դդ. և տիրապետող էր դարձել Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակը:

Մինչև թվականի 3-րդ տարբերակին անցնելը քննենք, անկասկած, Քրիստոնեական թվականի 2-րդ տարբերակի մասին մի վկայություն, որին հանդիպում ենք Սամուել Անեցու մոտ. «Մինչև ցփր թուականիս մերոյ ուղղեալ էր ս. վարդապետին իմոյ Գէորգայ ըստ քննիկոնին գնահանջն եւ ասէ. տեսի ի Շ.եկին զգփր թուականին առածին ամն նահանջ, ոչ գիտերով զգիարդն՝ թողով աստի և յառաջ ըստ գրեալսն»²:

Կասկած լինել չի կարող, որ Սամուել Անեցին իր ժամանակագրություն մեջ օգտագործել է Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակը, որովհետև հայոց և քրիստոնեական թվականների տարբերությունը 553 է, չհաշված որոշ գրչական սխալներն ու ընդմիջարկությունները: Սակայն հայոց մեկ թվականի մասին գրած վերոհիշյալ հատվածում հայտնում է, որ իր վարդապետի՝ Գէորգի գրած քրոնիկոնում հայոց մեկ թվականը ըրված է նահանջի տարում: Պատճէններում նահանջի կանոնը շատ հստակ է. թվականը բաժանում են 4-ի, և միայն զրո ստանալու դեպքում է նահանջի տարի: Հայոց մեկ թվականը երբեք նահանջի տարի լինել չէր կարող, ուստի իր

¹ Ըստ Մատեան գիտութեան եւ հաւատոյ Դաւթի քահանայի ժամանակագրութեան՝ Պետրոս Գետադարձի 1-ի տարին էր ՆԿԵ (465) Յայոց Մեծ թվականից (= 465 + 555 = 1020 թվական քր. թվ. 2-րդ տարբ., 465 + 552 = 1017 թ. Դիոնիսյան քր. կամ ներկա թվ.) մինչև նրա 23-րդ տարին՝ 487 Յայոց Մեծ թվական (= 487 + 555 = 1042 թ. թվական քր. թվ. 2-րդ տարբ., 487 + 552 = 1039 Դիոնիսյան քր. կամ ներկա թվ.): Ինչպես Միքայել Պոգոնատի 1-ին տարով ըրված Յայոց Մեծ թվականի ՆՁԱ տարում, իսկ տարիները (Ա, Բ, Գ, Դ) թվարկված են ՆՁԲ (482) թվականից, այն է՝ ըստ հեղինակի 481/2 + 555 = 1036/7 թ.՝ քրիստոնեական թվականի 2-րդ տարբերակով և 481/2 + 552 = 1033/4 թ.՝ մինչև ՆՁԵ (485) թվ. (485 + 555 = 1040 թ.՝ քր. թվականի 2-րդ տարբ.-ով և 485 + 552 = 1037 թ.): Ներկա թվագրմամբ՝ Պետրոս Գետադարձի առաջին տարին 1020 + 22 = 1042 թ., իսկ Միքայել Պոգոնատը՝ 1034 + 4/5 = 1038/9 թ.:

² Սամուել Անեցի, Անեցոյ քահանայի Յաւաքմունք ի գրաց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոյ մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Վաղարշապատ, 1893, էջ 75:

վարդապետի քրոնիկոնում հայոց մեկ թվականին զուգահեռ դրված է եղել Քրիստոնեական թվականի 2-րդ տարբերակը, այն է՝ հայոց 1 թիվը = 556 Քրիստոնեական թվին (556 : 4 = մն 0՝ նահանջ տարի): Ուստի Գէորգ վարդապետի քրոնիկոնը նման է եղել 11-րդ դարի 40-ական թվականների սկզբին գրված ժամանակագրությունը:

Անցնենք Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի վերլուծությունը:

Նկատենք, որ Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի սկզբնավորողը Հովհաննես Սարկավազն է, ով ոչ միայն Հայոց Մեծ և Հայոց Փոքր թվականների կանոններն է սահմանել, այլև կանոնել՝ ինչպես քրիստոնեական թվականությունը գանազան համակարգերը վերածել Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի:

Շարունակենք Արևի խավարման մասին պատառիկում տեղ գտած համաժամանակյա թվականություն մյուս համակարգերի քննությունը:

Վերլուծենք Հռոմեական Փոքր թվականը, որը բնագրում 333-ն է: Հռոմեական Փոքր թվականի մասին Սարկավազն ունի մի քանի կանոն՝

1. «Դարձեալ կա՛լ զՀայ թոականն զՆորն, ՅԴ (304) ի վերայ՝ բեր, Փոքր թոական է Հռոմի, որ կոչի Քննիկոն»¹: «Կալ Յ (300)՝ ուղղել՝ ՅԴ (304)՝ և զհայդ՝ հռոմի է»²:
2. Ինչպես հայտնի է վերոբերյալ բնագրերից, հայոց և հռոմեացոց փոքր թվականների միջև կա 304 տարվա տարբերություն: Հայոց և հռոմեացոց Մեծ թվականների միջև նույնպես առկա է 304 տարվա տարբերությունը հայոց այն տարիների համար, որոնք ավելացել են մեկ տարով, այն է՝ 1004 թվականից հետո ընկած տարիների համար, քանզի այդ թվականից նաև սարգի 1-ը հատեց մարտի 20-ը, և ավարտվեց հայոց շարժական տոմարի 1460-ամյա պարբերաշրջանը, որը հայոց տոմարով հավասար էր 1461 տարվա: Սարկավազը բացատրում է նաև, թե ինչպես է առաջացել այդ հաստատունը. «Իսկ ՅԴ (304) ի վերայ թոականին դնելոյ այս է պատճառն. Զի սկզբանէ մինչև ի սկիզբն հայ թոականին ԺԶ (16) խորան, որք լինին ամք ՅԴ (304), և ի հայ թոականէն ի հռոմով ԺԲ (12) խորան, որ է ՄԻԸ (228)»³:
3. «Թոական հռոմի այսպէս արա՛ւ. կա՛լ եւթն ամէն Փիլիպոսի կայսեր մինչև յերեսուն և չորս ամն Յուստիանոսի կայսեր և ի ԻԴ (24)ն Խոսրովու

¹ Պատճեն տունարի (Է-ԺԵ դդ.), աշխ.՝ Ջ. Էյնաթեանի և Գ. Տեր-Վարդանեանի, էջ 151:

² Հովհաննեսի «Պատճեն տունարի» աշխ., տե՛ս Ա. Աբրահամյան, Գշվ. աշխ., էջ 215:

³ «Սեկնութիւն տունարիս Հայկազնեայ» աշխ., տե՛ս Ա. Աբրահամյան, Գշվ. աշխ., էջ 226:

պարսից արքայի, որ լինին ամբ ՅԴ (304), զիայ թոականն վերայ բե՛ր և երթ զըջան ՇԼԳ (533). Որ մնայ՝ թոական է հոռոմի»¹:

4. «Եւ լինին մինչև ի յանկումն երկուհարիւրեկին՝ յերկրորդէն Փիլիպպեայ, ամբ ՅԴ (304), որոյ վրայ ածելով զհայոցն թոականն, գտանի հոռովմոցն»²:

5. «Կա՛լ զհոռոմի թոականն, ՄԻԹ (229) ի վերա՛յ բեր, թոական է հայոց: Կա՛լ զհայ թոականն, ՄԻԹ (229) ի բա՛ց երթ, թոական է հոռոմի»³:

Հոռոմի 333 թվականին ավելացնելով 229-ը ստանում ենք 562՝ Հայոց Բուն թվականը, ինչպես և վերջինից հանելով 229-ը ստանում ենք հռոմեացոց Փոքր թվականի 333-ը տարին:

Առաջին կանոնը հիմնավորված է Արևի խավարման մասին պատառիկում հռոմեացոց ու հայոց Փոքր թվականների և 304 հաստատունի առնչակցություններով, այն է՝ $29 + 304 = 333$ և $333 - 304 = 29$:

Երկրորդ կանոնով՝ տեղ է գտել հայոց Մեծ թվականին գումարելով 304 հաստատուն ստացված թիվը, որից պետք է հանել 533 տարի, այն է՝ $562 + 304 = 866 - 533 = 333$: Նկատենք, որ 533-ը հայոց Մեծ թվականը մեկով ավելացած տարիների համար է, որի կանոնը սահմանել է Հովհաննես Սարկավազը:

Ի վերջո, երրորդ կանոնով՝ հռոմեական Փոքր թվականին գումարվում է 229 հաստատունը (նախկին 228-ի փոխարեն, որը զբանցված է առաջին կանոնի բացատրության մեջ) և ստացվում է հայոց Մեծ թվականը՝ $333 + 229 = 562$: Այստեղ հայոց Մեծ թվականին ավելացած տարին գումարվել է հաստատունին: Այս կանոնի խմբագիրը ևս Հովհաննես Սարկավազն է:

Պատառիկում այս հռոմեական թվականի և Քրիստոնեական թվականի տարբերությունը 782 (1115 - 333) է, որը 2 տարով ավելի է Դիոնիսյան կամ ներկա թվականից, այն է՝ Քրիստոնեական թվականի 1-ին տարբերակից (1113 - 333 = 780):

Այդ թվականների համարժեքությունը նկատվում է նաև՝ դրանք 19-ի բաժանելուց հետո ստացված մնացորդների 10 արժեքից ($333 : 19 =$ մն. 10 և $29 : 19 =$ մն. 10)⁴: Երկու թվականների մնացորդներով էլ ստանում ենք ապրիլի 4-ի լրման տարվա համարժեքը, քանի որ 2-ում էլ 532-ամյա Ջատկացուցակն սկսում է հաշվման իմաստով 1-ին տարվա՝ ապրիլի 13-ի Լուսնի լրումով: Այլ խոսքով՝ Հռոմեացոց Փոքր թվականից ներկա թվա-

¹ Հովհաննեսի «Պատճեն տոմարի» աշխ., տես Ա. Աբրահամյան, Գշվ. աշխ., էջ 210:

² Յաղագս ըստ հռոմոց ամսոց. ..., տես Ա. Աբրահամյան, Գշվ. աշխ., էջ 246:

³ Նույն տեղում:

⁴ Ռ. Վարդանյան, Անանիա Շիրակացու հիշատակարանների մեկնության շուրջը և մի քանի տոմարական ժամանակագրական հարցեր, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1987, թիվ 1, էջ 195-210:

կանը ստանալու համար պետք է ավելացնել 780 ($333 + 780 = 1113$), որովհետև Հռոմեացոց Փոքր թվականն սկսել է 781 թվականից, այսինքն՝ 1115 թվականից պետք է հանել 2 տարի:

Հաջորդ համաժամանակյա թվականը Հայոց Փոքր՝ 29 թվականն է, որը 532-ամյա Ջատկացուցակի 2-րդ շրջապտույտի թվականն է: Քանի որ 2-րդ շրջապտույտի Ջատկացուցակը կազմել է Հովհաննես Սարկավազը, ուստի նրանով ձևավորված թվականը հետագայում անվանվել է նաև Սարկավազադիր թվական:

Հայոց Փոքր թվականի և Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի միջև առկա է 2 տարվա տարբերություն ($1115 - 29 = 1086 - 2$), որը երկու տարվա տարբերություն ունի նաև Քրիստոնեական թվականության 3-րդ տարբերակից, որից էլ պետք է հանել երկու, քանզի Հովհաննես Սարկավազի 532-ամյակն սկսում է 1085 թվականից և հաստատուն թիվը 1084-ն է, ինչպես ցույց է տրվել¹, և դրան գումարելով 29, կստանանք 1113 թվականը, որի հիմնավորվեց 29-ը 19-ի բաժանելուց հետո ստացված մնացորդով՝ 10-ով, քանի որ Հայոց Փոքր թվականն էլ, ինչպես Հռոմեական Փոքր թվականը, սկսում է հաշվման իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարուց, իսկ ապրիլի 4-ի լրման տարին հաշվման իմաստով 10-րդ տարին է:

Հաջորդ համաժամանակյա թվականը Հռոմի հիմնադրման՝ 1867 թվականն է, որի տարբերությունները Քրիստոնեական թվականի 1-ին և 3-րդ տարբերակներից՝ 754 ($1867 - 1113$) և 752 ($1867 - 1115$) տարիներ են: Հռոմի հիմնադրման տարվա մասին կան տարակարծություններ, ուստի դժվար է պնդել, թե որ տեսակետն է պաշտպանել Հովհաննես Սարկավազը: Հավանաբար, նախապատվությունը տվել է 752-ին, որը 2 տարվա տարբերություն ունի քրիստոնեական ներկա թվականից:

Համաժամանակյա թվականների շարքում հաջորդը Դիոկղետիանոսի թվականով տրված, այն է՝ 830 թվականն է: Քրիստոնեական թվականների երկու տարբերակներով տարբերությունները ($1115 - 830 = 285$ և $1113 - 830 = 283$) ցույց են տալիս, որ 1 տարի պետք է հանել 830-ից, դարձնելով 829, քանի որ Դիոկղետիանոսի թվականով տրված Ջատկացուցակներում հաստատուն թիվը միշտ 284-ն է, որովհետև, թեև Դիոկղետիանոսի թվականն սկսում է 284 թվականի օգոստոսի 29-ից և ավարտվում 285 թվականի օգոստոսի 28-ին, և տարվա երկու հատվածների համար կիրառվում են երկու հաստատուններ՝ օգոստոսի 29-ից դեկտեմբերի 31՝ 283-ը և հունվարի 1-ից օգոստոսի 28-ը՝ 284-ը, սակայն Ջատկացուցակներում տարիներն

¹ Տե՛ս Գ. Սիմոնյան, Հովհաննես Սարկավազի անշարժ տոմարի ուսումնասիրությունների պատմությունից, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք Է, Եր., 2012, էջ 223-224:

ընկնում են 285 թվականին, ուստի հաստատունը 284-ն է: Հետևապես, Սարկավազի գրանցած 830-ը պետք է դարձնել 829 (թիվը կլորացրել է), որպեսզի իր իսկ սահմանած Քրիստոնեական թվականի համար ստանանք երկու տարվա տարբերություն, այն է՝ $1115 - 829 = 286$, իսկ ներկա թվականի համար՝ $1113 - 829 = 284$: Ի վերջո, 829-ը բաժանելով 19-ի՝ մնացորդում կունենանք 12 ոսկե թվի համարը, որի 1-ին տարին նրանց ընդունած 19-ամյակի 1-ին՝ ապրիլի 5-ի (մեզանում՝ ապրիլի 6-ի) լրման տարին է (Իրենի 19-ամյակով), իսկ Արեգակի խավարման տարին կլինի ապրիլի 4-ի լրման տարին, ինչպես մյուս համաժամանակյա տարեթվերում է: Այսպիսով, Դիոդորեանոսի թվականը հայոց Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակից կունենա 2 տարվա տարբերություն, իսկ ներկա թվականի հետ կնույնականանա, քանզի Ջատկացուցակներում Դիոդորեանոսի, այն է՝ ներկա թվականին գումարվել է 284 հաստատունը:

Քննենք հաջորդ՝ Անտիոքի շինությունից համաժամանակյա թվականը, որը նույն Անդրեասի թվականն է: Այն արձանագրվել է ՌԿԳ (= 1063), սակայն այն գրչական սխալով է և պետք է սրբագրել ՌՃԿԳ (= 1163), որովհետև տոմարական բնագրերում կա սահմանված կանոն. «Կալ Ո (600) և զհայդ՝ Անդրէասին է»¹: Բնագրում փաստված «զհայդ» -ը հայոց Բուն՝ 562 թվականն է, որին գումարելով 600, կստանանք 1162. այն 1 տարվա տարբերություն ունի բնագրում արձանագրվածից, որը կբացատրենք քիչ հետո:

Հարկ է նշել, որ Անտիոքացոց թվականն օգտագործել է Անդրեասը՝ իր 200-ամյա Ջատկացուցակը կազմելիս: Ջատկացուցակի հիշատակարանում գրված է, որ այն սկսել է Անտիոքացոց 401 (= 353) և ավարտել 600 (= 552) թվականին: Անանիա Շիրակացու տեղեկությունից համաձայն՝ Անդրեասի Ջատկացուցակի ավարտից (552 թ.) հետո սկսվեց էասյան 532-ամյա Ջատկացուցակը (553 թ. = Հայոց 1 -ին), որը հայոց թվականության համակարգի հիմքը դարձավ: Դա էր պատճառը, որ տոմարագետները կանոն սահմանեցին, թե՛ վերցրո՛ւ 600 հաստատուն թիվը, գումարի՛ր հայոց թվականը, կստանաս Անտիոքացոց թվականը: Ինչպես տեսանք վերոգրյալ շարադրանքում, այսպիսի կանոն ունի Սարկավազը: Այս կանոնը գործել է Շեակ այն տարիների համար, երբ հայոց թվականին գումարել են 552 հաստատունը, իսկ Շեակում հայոց թվականը մեկով ավելանալուց հետո, գումարվում է 551 հաստատունը: Այս կանոնը կգործի, եթե հաստատունից՝ 600-ից, 1 հանվի կամ էլ, ավելի ճիշտ կլինի, եթե հայոց թվականից հանվի ավելացած 1 տարին: Բացատրությունից հետո անցնենք Անտիոքացոց համաժամանակյա թվականի քննությունը: Բնագրում վկայված 1163 թվակա-

¹ «Սեկնութիւն տունարիս Յայկազնեայ» աշխ., տես Ա. Գ. Աբրահամյան, ԳՂՎ. աշխ., էջ 217:

նր բաժանելով 19-ի՝ մնացորդում կունենանք 3, որը 2 տարով ավելի է, որովհետև Անտիոքացոց-Անդրեասի 19-ամյակի տարին պետք է լիներ 1, այսինքն՝ ապրիլի 4-ի լրման տարին: Անտիոքացոց-Անդրեասի թվականը, ինչպես տեսանք, բնագրում 1063 է, որը սրբագրեցինք 1163՝ հիմնվելով հայոց թվականից Անտիոքացոց թվականն ստանալու կանոնի վրա: Սակայն Անտիոքացոց թվականից հայոց թվականը հանելով (1163 - 562), ստանում ենք 601, որը մեկ տարով ավելի է, քան կանոնի 600 հաստատունը: Բացի այդ, 562 հայոց Մեծ թվականին Շ-եակի հայոց 561 թվականը դարձել էր 562, այսինքն՝ Նաւասարդը գարնանային հասարակածը հատելու հետևանքով, հայոց տոմարում մեկ տարի էր ավելացել, ուստի կա՛մ 562-ից, կամ 600 հաստատունից մեկ տարի պետք է հանվի՝ Անտիոքացոց ու հայոց Մեծ թվականի միջև համարժեքություն ստանալու համար, այլպես գրանցված 1163 թիվն ունի 2 տարվա տարբերություն:

Անտիոքացոց 1163 տարին Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակից՝ 1115-ից ունի 48, իսկ Դիոնիսյան կամ ներկա թվականից՝ 50 տարվա տարբերություն: Ստացվում է, որ Անտիոքացոց թվականը 1-ին դեպքում՝ սկզբնավորվել է մ. թ. ա. 48 թվականին, իսկ 2-րդ դեպքում՝ մ. թ. ա. 50՝ ներկա թվականին: Իրականում Անտիոքացոց թվականը սկզբնավորվել է մ. թ. ա. 48 թվին, որովհետև Անդրեասի Զատկացուցակի ավարտի տարին համարժեք է ներկա 552 թվականին, ըստ Անանիա Շիրակացու հաշվումների, որը բերեցինք վերևում:

Բնագրում գրանցված հաջորդ համաժամանակյա տարեթիվը 1423-ն է՝ Կիւրղոս քաղաքի շինություն թվականը, որն այժմ կոչվում է Սելևկյան թվական: Այն հայկական վաղ շրջանի բնագրերում անվանվել է յունաց կամ Ալեքսանդրի թվական, իսկ ուշ շրջանի բնագրերում՝ Ասորոց:

Կիւրղոս քաղաքի շինություն համաժամանակյա թվականը՝ 1423-ը, բաժանելով 19-ի, մնացորդում ստանում ենք 19-ը, որը նշանակում է, թե նրա 1-ին տարին ապրիլի 15-ի լրման տարին է: Ապրիլի 15-ի լրման տարին՝ իբրև 19-ամյակի 1-ին տարի, ոչ մի համակարգում չի ընդունվել, հետևապես 1 տարի պետք է ավելացնենք այդ թվականին, որպեսզի թե՛ 19-ամյակի 1-ին, թե՛ այդ թվականի լրման տարիները համընկնեն ապրիլի 4-ի լրման տարուն: Այլ խոսքով՝ արձանագրված 1423-ը պետք է լիներ 1424: Կատարվել է Գ-ի և Դ-ի գրչական սովորական սխալ: Սակայն կատարենք հաշվարկը երկու թվերով էլ, որովհետև այնքան էլ հասկանալի չէ, թե որ համաժամանակյա թվականից է ստացել հեղինակը Կիւրղոս քաղաքի շինություն թվականը: Այդ թվականից՝ 1423 (1424), հանենք Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի թիվը՝ 1115, կստանանք 308 (309), իսկ Քրիստոնեական Դիոնիսյան կամ ներկա թվականը՝ 1113-ը, հանելով՝ 310 (311):

Նույն ժամանակների բնագիրներից մեկում նշված է. «Եւ յԱղեքսանդրէ մինչեւ ի Ծնունդն Քրիստոսի՝ ամք ՅԹ (309)»¹, ուստի Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի հաստատունն ընդունել են 309, հետևապես Կիւրղոս քաղաքի շինութեան թվականը 1424-ն է: Այդ է վկայում 'Իրոնիսյան քրիստոնեական թվականի հաստատունի' 311-ի, ինչպես և քրիստոնեական թվականների տարբերությունը՝ հավասար 2-ի:

Կիւրղոս քաղաքի շինութեան թվականի և հայոց Մեծ թվականի տարբերությունը 861 (862) է: Հայոց թվականը 1-ով ավելացել է Նաւասարդը գարնանային օրահավասարից հետո ընկնելու պատճառով, ուստի հաստատուններից մեկն է ճիշտը, այն է՝ 862-ը, ինչը երևում է ներկա թվականի և հաստատունի տարբերությունից՝ (1113-862) = 551: Ասենք նաև, որ տարիների՝ Նաւասարդին նախորդող հատվածի համար հաստատունը եղել է 861, իսկ հաջորդողի համար՝ 862-ը կամ էլ Հայոց թվականից պետք է հանել 1, որպեսզի քննվող թվականների հաստատունը մնա անփոփոխ, այն է՝ 861: Եթե բնագրում վկայված 1423 թիվը գրանցել է Հովհաննես Սարկավազը, ապա հայոց թվականի մեջ կատարված ավելացումը նկատի չի ունեցել, որի հիմնավորողն ինքն էր:

Բնագրում հաջորդ համաժամանակյա թվականներն են՝ Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակը, Արարչութեան 70-ից կամ Եվսեբիոսի, հայոց Մեծ և Օլիմպիական թվականները, որոնցից քննարկվել են Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակն ու հայոց Մեծ թվականը: Արարչութեան 70-ից կամ Եվսեբիոսի թվականներին կանդրադառնանք հետագա շարադրանքում, իսկ Օլիմպիական թվականի մասին նշենք հետևյալ բնորոշ իրողությունը: Օլիմպիական 1889 բաժանելով 19-ի, ստանում ենք 8 մնացորդ, հետևապես 1-ին տարին ընկնում է ապրիլի 2-ի լրման տարում, որը բյուզանդական 19-ամյակներից մեկի 1-ին տարին էր և Անանիա Շիրակացու վերադիրների, հնգյակների, վեցյակների հաշվումներն սկսելու տարին:

Ինչպես նկատելի է, այս բնագրում Սարկավազն օգտագործել է միայն Արարչութեան 70-ից կամ Եվսեբիոսի թվականը, սակայն տոմարական ժողովածոյի տարբեր հատվածներում թվարկել է Արարչութեան բազմաթիվ թվականներ, կանոններ սահմանել դրանց համար, ինչպես և համադրել է հայոց Մեծ թվականի հետ: Այնպես որ, օգտագործելով Սարկավազի ստեղծած կանոնները, իր բնագրերից հայտնի Արարչութեան թվականները կարող ենք վերածել ինչպես Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի, այնպես էլ ներկա թվականի՝ հիմքում ունենալով թե՛ համաժամանակյա

¹ Պատճեն տունարի (Է-ժե. դդ.), աշխ.՝ Ջ. Էյնաթեանի և Գ. Տեր-Վարդանեանի, էջ 159:

թվերը, թե՛ հայոց Մեծ թվականի սկզբի կտրվածքով վկայված Արարչու-
թյան տարիները:

Հովհաննես Սարկավազը «Մեկնութիւն տուժարիս Հայկազնեայ», որը
անվանել ենք «Վասն Հա[յկա]ղնեան տաւնից տարեկանաց շրջաբերութեան
տուժարիս», բնագրի սկզբի մասում տվել է Արարչության մի շարք թվա-
կաններ՝ կապելով մինչև հայոց թվականն ընկած ժամանակաշրջանի հետ:

Բերենք բնագրային վկայությունները՝ «...Ձի ըստ Անդրէասայ ժա-
մանակագրութեանն լինի յԱդամայ մինչև հայ թոականն ՅՃԾԵ (6155), և
ըստ կայսերական պատմութեանն՝ ԲՉԿԱ (5761) (սրբագրել՝ 5751), և ըստ
Անանիա Շիրակունւոյ՝ [յԱդամայ մինչև Քրիստոս] ԲՃՂԸ (5198), և [ըստ
Եպիփանուս]՝ ՅԾԳ (6053), և ըստ երբայականին՝ ՅՄՁԹ (6289)՝, և ըստ
հրէիցն, որով մեք վարիմք, ԲՊԻԴ (5824), և ըստ շամրտացւոցն՝ ԲՊԼԲ
(5832), և ըստ Շ.եկին թոականին՝ ԲՋՀԶ (5976)»²:

Արարչության թվականների վերլուծությունն սկսենք Արևի խավար-
ման մասին պատառիկում տեղ գտած 70-իցի թվականի մասին եղած տե-
ղեկությունից և Եվսեբիոսի օգտագործած տարեթիվի և մյուս համաժամա-
նակյա թվականների օրինաչափությունների բացահայտման կոնկրետ օրի-
նակներով ցույց տանք Սարկավազի մոտեցումը այդ թվականներին:

Այս պատառիկում Արարչության 70-ից կամ Եվսեբիոսի թվականը
6313-ն է, որին համարժեք է իր ստեղծած Քրիստոնեական թվականի 3-րդ
տարբերակը՝ 1115-ը, ըստ որի արարչությունից մինչև Քրիստոս ստանում
ենք 5198 (6313 - 1115): Այդ դարազույգ տարեթիվը վկայված է Անանիա
Շիրակացու և Եվսեբիոսի ժամանակագրությունն օգտագործած հեղինակ-
ների մոտ, այդ թվում նաև Հովհաննես Սարկավազի:

6313-ը բաժանելով 19-ի՝ ստացվում է 5 մնացորդ, որը 4 տարով ավե-
լին է 19-ամյակի ապրիլի 4-ի լրման թվականից: Պարզ է, որ Հովհաննես
Սարկավազը, հետևելով Անանիա Շիրակացուն, Արարչության Եվսեբիոսի
1 թվականը փորձել է կապել 19-ամյակի 1-ին տարվա՝ ապրիլի 4-ի լրման
տարուն՝ սխալվելով 4 տարի:

Ադամից Արևի խավարման տարին 6313 հաշված Սարկավազը համա-
ժամանակյա է նկատել հայոց Մեծ թվականի 562 տարուն, ուրեմն Ադամից
մինչև հայոց Մեծ թվականը կլինի 5751 տարի, իսկ այդ տարեթիվից հանե-
լով 5198 (Ադամից Քրիստոս)՝ կստանանք 553:

¹ «Մեկնութիւն տուժարիս Հայկազնեայ» աշխ., տես Ա. Աբրահամյան, նույն տեղում, ժամանակա-
գրության մեջ՝ ՅՄՂԹ (6299), որից ստացվում է 10 մն:

² «Մեկնութիւն տուժարիս Հայկազնեայ» աշխ., տես Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 224:

Ի դեպ, Արևի խավարման պատառիկում գրված է. «Ոմանք յերիս ամս աւելորդ մուծանեն ի ներքս ի մեջ ամացդ՝ որք ասեն ՇԾԶ (556) ի ծննդենէն տեառն մինչ ի սկիզբն Հայ թողականին. Բայց ոչ այդպէս, այլ ՇԾԳ (553) ամ ի գալստենէ փրկչին մինչի ի Հայոց թողական դրութիւն....»¹:

Նկատենք, որ հեղինակն ընդգծում է ՇԾԳ (553) ամ (Քրիստոսից մինչև Հայ թվականը): Հասկանալի է, որ «Կալ ՇԾԳ (553) և զՀայդ՝ կենարարին է» կանոնը Հովհաննես Սարկավազինն է: Այդ երևում է նաև Քրիստոնեական թվականության 3-րդ տարբերակի և Հայոց թվականի տարեթվերի տարբերությունից՝ $1115 - 562 = 553$:

Արարչություն 70 թվականից՝ 6313-ից, հանենք Հայոց Մեծ թվականը, կստանանք արարչությունից մինչև Հայոց թվականը, իսկ դրանից էլ հանենք 5200 (արարչությունից մինչև Քրիստոս ընկած ժամանակահատվածը՝ Քրիստոնեական Դիոնիսյան կամ ներկա թվականից ստացված (6313 - 1113)), կստանանք 551, որը Հայոց Մեծ թվականին գումարելին է այն Ե-եակ թվականների համար, որոնք մեկ տարով ավելացել էին Նավասարդը հասարակածը հատելու հետևանքով: Իսկ մինչև Նաւասարդն ընկնող Ե-եակ թվերին պետք է գումարել 1, այն է՝ 552, որպեսզի գտնվի թե՛ ճիշտ ներկա թվականը, թե՛ 19-ամյակի լրման տարին (և՛ տվյալ տարին, և՛ 1-ին տարին), որովհետև Զատկացուցակի կտրվածքով Հայոց 1 թվականը համարվեք է հոռոմեացոց շարքի 1 թվականին, որը հավասար է 553 թվականին, իսկ տարբերությունը 552 (553 - 1):

Հարկ է նշել, որ Ադամից մինչև Հայ թվականը բերված ժամանակահատվածի համար Կայսերական պատմության ԲԶԿԱ (5761) -ն պետք է սրբագրել ԲԶԾԱ (5751), որովհետև այն Արարչության 70-իցի կամ Եվսեբիոսի թվականն է, որը վերլուծեցինք Արևի խավարման մասին պատառիկի թվերի քննարկման ժամանակ: Տարբերությունը միայն այն է, որ այստեղ արարչության այդ թիվը Սարկավազը կապել է մինչև Հայոց թվականն ընկած ժամանակահատվածի հետ և բնորոշել Կայսերական պատմության մեջ վկայված ժամանակով (= 5751 տարի), իսկ Արևի խավարման մասին պատառիկում՝ իբրև Արարչության 70-իցի կամ Եվսեբիոսի թվականի կոնկրետ դրսևորում, այն է՝ 6313 (5751 + 562) տարի:

Ինչ վերաբերում է Անանիա Շիրակացու տված թվին՝ 5198-ին, ապա այն վերցված է, իսկապես, նրա «Ժամանակական կանոնից», և այն Ադամից մինչև Քրիստոս ժամանակահատվածն է, ուստի պետք է վերականգնել «յԱդամայ մինչև Քրիստոս»:

¹ Լուսնի լրման և [Արևի] խավարման մասին, տես Ա. Աբրահամյան, Գշվ. աշխ., էջ 278-279:

Այժմ անցնենք «Մեկնութիւն տուժարիս Հայկազնեայ» գլխազրոյթ պահպանված բնագրի վկայութիւնների վերլուծութեանը:

Բնագրում, վկայակոչելով Անդրեասի ժամանակագրութիւնը, Աղամից մինչև Հայոց Մեծ թվականը գրանցված է 6155 տարի: Հարկ է նշել, որ Անդրեասի ժամանակագրութիւնը մեզ է հասել Անանիա Շիրակացու «Ժամանակական կանոնի» միջնորդութեամբ, որտեղ արարչութիւններից մինչև Քրիստոսի ծնունդը 5502 տարի է¹, իսկ մինչև Հայոց թվականը կլինի 6054 (5502 + 552), որն ակնհայտորեն տարբերվում է բերված՝ 6155 թվից: Հետևապես Սարկավազն այստեղ Անդրեասի ժամանակագրութիւնն ասելով, հասկացել է մեկ այլ ժամանակագրութիւն, որը վերագրվել է Անդրեասին: Այդ ժամանակագրութիւնը մեզ է հասել թղթյա հնագույն ձեռագրի մեջ: Այն սկսում է Քրիստոսի 1 թվականից և հասցվում մինչև 11-րդ դարի 40-ական թվականների սկզբները: Այդ ժամանակագրութեան անանուն հեղինակը Աղամից մինչև Հայոց թվականի 1-ին տարին գրանցել է 6156 տարի՝ համադրելով 556 Քրիստոնեական թվականութեան 2-րդ տարեբաղի հետ, այն է՝ «յԱղամայ ցնոր թոականս ամք ՅՃԾԶ. Դարձեալ սկիզբն արար ի նոր թոականիս Լ և Դ (34) ամէս Յուստինիանոսի կայսեր ի ՅԴ (304) էր Հոռոմի թոականս»²:

Հովհաննես Սարկավազի և անանուն ժամանակագրի տեղեկութիւններն՝ Աղամից մինչև Հայոց թվական, համարժեք են (= 6155 և 6156), չհաշված մեկ տարվա տարբերութիւնը, որն առաջացել է Հայոց մեկ թվականն էլ հաշվի առնելով: Որպեսզի հստակ երևա այդ տարբերութիւնը և պարզվի, թե հաշվարկման ինչ համակարգ են օգտագործել երկու հեղինակներն էլ, Արարչութեան այդ թվականները վերածենք Աղամից մինչև Արեգակի խավարման տարին եղած ժամանակի և կստանանք՝ 6155 + 562 = 6717 և 6156 + 562 = 6718, իսկ ստացված տարեթվերը բաժանելով 19-ի՝ կստանանք 10 և 11 (-1) տարի: Պարզվում է, որ 19-ամյակի 1-ին տարին ապրիլի 13-ի լրման տարին է, իսկ Արևի խավարման տարին՝ ապրիլի 4-ինը: Երկու հեղինակներն էլ Արարչութեան թվականը հաշվարկել են Շեակի հաշվման իմաստով 1-ին տարով, հետևապես Աղամից մինչև Հայոց 1 թվականը պետք է լիներ 6157, որպեսզի Հայոց 1 թվականը համարժեք լիներ 19-ամյակի՝ հաշվման իմաստով 1-ին տարուն, որն էլ ներկա թվականով համապատասխանում է 553 թվականին, Քրիստոնեական թվականի 2-րդ և 3-րդ տարեբաղներով՝ 556 և 554 թվականներին, իսկ Աղամից Քրիս-

¹ Ռ. Վարդանյան, Լ. Սարգսյան, Գ. Սիմոնյան, «Ժամանակական կանոնի»՝ արարչության թվականության համակարգերի և Ա. Շիրակացու հաշվման սկզբունքների փոխառնչությունները, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք - Զ, Եր., 2011, էջ 26-27:

² Մանր ժամանակագրություններ, աշխ.՝ Վ. Հակոբյանի, հ. 2, Եր. 1956, էջ 17:

տոս Քրիստոնեական թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ տարբերակներով՝ 5604, 5603, 5601, մինչդեռ 2-րդ և 3-րդ տարբերակների առկա թվերով ստացվում են 5600 (5156 - 556) և 5602 (6155 - 553)՝ դրսևորելով 1 տարվա սխալ:

Հովհաննես Սարկավազի բերած հաջորդ Արարչության թվականը Աղամից մինչև հայոց թվականը 6053 է, որը վերագրել է Եպիփան Կիպրացուն: Այն ևս արտահայտենք Արևի խավարման տարվա կտրվածքով՝ $6053 + 562 = 6615$, որը բաժանելով 19-ի, կստանանք 3 մնացորդ: Այն 2 տարով ավելին է Արարչության 1-ին տարվա՝ ապրիլի 4-ի լրման տարուց: Պարզ է, որ Արարչության 1 թվականը փորձել է կապել 19-ամյակի 1-ին տարվա լրման օրվան՝ երկու տարվա սխալով, իսկ 6053-ը կապել է հաշվման իմաստով 1-ին տարվա՝ ապրիլի 13-ի հետ ($6053 : 19 = \text{մն. } 11$)՝ մեկ տարվա սխալով, որովհետև ապրիլի 13-ի լրման տարուց սկսվող մինչև ապրիլի 4-ի տարին, այն է՝ հայոց թվականի 10-րդ տարին, 10 տարի է: 6615 -ից հանենք Քրիստոնեական թվականի 3-րդ տարբերակի տարին կստանանք Աղամից մինչև Քրիստոս ընկած տարիները՝ 5500 ($6615 - 1115$), իսկ 6053-ից հանելով 5500, կստանանք 553, որը Սարկավազի հաստատունն է՝ ավելացրած Քրիստոսից մինչև հայոց թվականը: Քրիստոնեական թվականները 1-ին և 3-րդ տարբերակների տարբերությունը 2 տարի է, որը երևում է նաև Աղամից մինչև Քրիստոս ընկած տարիների հաշվով՝ $6615 - 1115$ և $1113 = 5500$ և 5502 , ուստի $5502 - 5500 = 2$:

Աղամից մինչև Արևի խավարման տարի պետք է լիներ 6613-ը, որպեսզի Արարչության քննարկվող թվականի առաջին տարին համապատասխաներ ապրիլի 4-ի լրման տարուն ($6613 : 19 = \text{մն. } 1$), իսկ Աղամից մինչև հայոց թվականը՝ 6052, մեկ տարվա տարբերությամբ, որովհետև հաշվման իմաստով 1-ին և 10-րդ տարվա հետ ունենար 10 մնացորդ ($6052 : 19$), այսինքն՝ հաշվման իմաստով 1-ին տարին արտահայտեր 10-րդ տարվա լրման տարին՝ ապրիլի 4-ը, որը հավասար է Արարչության 1-ին տարվա լրմանը՝ արտահայտված հայոց Մեծ թվականով:

Ըստ եբրայական հաշվարկի՝ Հովհաննես Սարկավազն Աղամից մինչև հայոց թվականը գրանցել է 6289: Արարչության այս թիվն արտահայտենք Արևի խավարման տարով՝ $6289 + 562 = 6851$ ՝ ըստ հայոց Մեծ թվականի: Այն բաժանելով 19-ի՝ կստանանք 11 մնացորդ, որը 1 տարվա սխալ ունի, որովհետև Արևի խավարումը եղել է ապրիլի 4-ի լրման տարում, իսկ հայոց թվականի հաշվարկով պետք է լիներ 10-րդ տարին: Արարչության 6289-ը տարին բաժանելով 19-ի՝ կստանանք 19 մնացորդ, որին պետք է գումարել 1 տարի՝ ստանալու համար հաշվման իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարին: Առկա հաշվարկներով արարչությունից մինչև Քրիստոս համարժեք են 5736 ($6851 - 1115$) և 5738 ($6851 - 1113$) տարիները, սակայն

իրականում պետք է գրվեր 6850 տարի, որպեսզի լրման տարին դառնար ապրիլի 4-ը, իսկ հաշվման իմաստով 1-ին տարին՝ ապրիլի 13-ի լրման տարին: Այդ 1 տարվա ավելացումը կապված է հայոց Շ-եակ թվականը մեկով ավելանալու իրողութայն հետ: Ինչ վերաբերում է 6289-ին, ապա այն 1 տարով պակաս է, քանզի համապատասխան գործողութայնից հետո պետք է մնացորդը լիներ 1 և ոչ թե 19-ը՝ ճիշտ լրման տարուն համապատասխանելու համար: Այնուհետև առկա՝ 6859-ից հանենք Արևի խավարման տարվա Քրիստոնեական թվականութայն համակարգի 1-ին և 3-րդ տարբերակները, կստանանք 5736 (6851 - 1115) և 5738 (6851 - 1113), սակայն պետք է լիներ 5737, իսկ արարչութայնի մինչև հայոց թվական՝ ոչ թե 6289, այլ՝ 6290, որպեսզի 19-ամյակի հաշվման իմաստով 1-ին և 19-ամյակի 1-ին տարիների մնացորդներ համարենք մեկը: Այս հաշվարկում, ակնհայտորեն, Ադամի 1-ին տարին գրվել է հաշվման իմաստով 1-ին տարվա, այն է՝ ապրիլի 13-ի լրման տարվա վրա, որը համարվեք է դիտվել Արարչութայն 1-ին տարուն: Հասկանալի է, որ Հովհաննես Սարկավազը հաշվարկը համապատասխանեցրել է հայոց 1 թվականի լրման տարուն, թեև տվել է «ըստ եբրայականի», ինչն էլ Անանիա Շիրակացու համաձայն՝ համարվեք էր ապրիլի 4-ի լրման՝ 19-ամյակի 1-ին տարվան:

Հովհաննես Սարկավազը «և ըստ հրէիցն, որով մեք վարիմք, ԲՊԻԴ (5824)» տարի է հաշվել Ադամից մինչև հայ թվականը և կանոն է սահմանել. «Թողան եբրայեցւոց այսպէս արա՛. կալ ԲՊԻԴ (5824), զհայ թողանն ի վերայ բեր, և ե՛րթ զշրջանս ՇԼԳ (533), ՇԼԳ (533). որ մնայ՝ թողան է եբրայեցւոց»¹:

Արևի խավարման տարում այդ հաշվարկը կհամապատասխանի 6386 (5824 + 562) տարվա: Հիշյալ թվերը բաժանելով 19-ի՝ մնացորդում կստանանք 10 և 2: Վերջինս 1 տարով ավելի է, քանի որ հայոց թվականը հայտնի պատճառով 1-ով ավելացել է: Այս Արարչութայն թվականի 1-ին տարին, իսկապես, ապրիլի 4-ի լրման տարին է, իսկ Ադամից մինչև հայոց թվականն արտահայտված է հայոց 1 թվականի հաշվարկով, քանի որ 5824-ը 19-ի բաժանելիս՝ մնացորդը 10 է: Հովհաննես Սարկավազն այս հաշվարկով հետևել է Անանիա Շիրակացուն, այսինքն՝ արարչութայն առաջին տարին ընդունել է Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի ապրիլի 4-ի լրման տարին:

Սարկավազն արարչութայնից մինչև հայոց թվականն «ըստ շամրտացւոցն՝ ԲՊԼԲ (5832)» է համարում, որը կհամապատասխանի 6394 (5832 + 562) Արևի խավարման տարուն: Այս տարեթվերը 19-ի բաժանելիս ստա-

¹ Հովհաննեսի «Պատճեն տոմարի» աշխ., տես Ա. Աբրահամյան, ԸՂՎ. աշխ., էջ 214:

նուժ ենք 18 (+2 – 19 = 1) և 10, ինչը ցույց է տալիս, որ հեղինակը 2 տարվա սխալ է թույլ տվել առաջին դեպքում՝ Ադամից մինչև հայոց 1 թվականը, իսկ երկրորդ դեպքում, քանի որ մնացորդը 10 է, ապա այն եղել է ապրիլի 4-ի լրման տարի, իսկ հաշվման իմաստով առաջին տարին ապրիլի 13-ի տարին էր, և այն ճիշտ է: Այս հաշվարկը նույնպես նա հարմարեցրել է Ծ-եակի 1-ին և 10-րդ տարիներին և վերոնշյալ բոլոր տարիների համար սովորականներին:

Ի վերջո, Հովհաննես Սարկավազը «ըստ Ե.եկին թոականին՝ ԲՁՀԶ (5976)»-ն է համարել Ադամից մինչև հայոց Մեծ թվականը՝ հետևելով նախորդ շրջանում ստեղծված կանոններին՝ հավանաբար, ստեղծված Անանիա Շիրակացու կողմից: Իսկ Արևի խավարման տարում արարչության քննարկվող թվականը կլինե՞ր 6538 (5976 + 562)-ը, որոնց 19-ի բաժանելուց հետո մնացորդները կլինե՞ն 10 և 1, այսինքն՝ այս դեպքում հատկորեն արարչության առաջին տարին կլինի ապրիլի 4-ի լրման տարին, ինչպես որ կարգել էր Անանիա Շիրակացին: Հարկ է նշել, որ մնացորդները բացարձակորեն համապատասխանում են հաշվման իմաստով՝ Ծ-եակի հայոց 1 և 10 թվականներին, որտեղ Հովհաննես Սարկավազը չի հաշվառել հայոց տոմարում ավելացած մեկ տարին, ուստի որպեսզի այս թվերը համարժեք դառնան կա՛մ Ծ-եակ 5976-ից, կա՛մ 562 հաստատունից պետք է 1 հանել, որովհետև 5976-ը համապատասխանում է 552 թվականին: Այդ երևում է Արարչության ու Քրիստոնեական թվականների տարբերությունից՝ $6538 - 1115 = 5423$ և $6538 - 1113 = 5425$: Իրականում արարչությունից մինչև Քրիստոս պետք է լինե՞ր 5424, քանի որ Արարչության Ծ-եակ 1 թվականը համարժեք է 5977-րդ տարուն ($5977 - 553 = 5424$):

Այսպիսով, Հովհաննես Սարկավազը տարբեր ազգերի՝ ժամանակի հայտնի Արարչության թվականներն արտահայտել է հայոց Ծ-եակի՝ հաշվման իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման, և 10-րդ՝ ապրիլի 4-ի լրման տարիներով՝ արարչագործության կիրառական թվականների 1-ին տարիները համապատասխանեցնելով այդ սկզբունքին: Արարչության քննարկված թվականների մի մասը գալիս է վաղ շրջանից, իսկ մյուս մասը տեղայնացած թվականներ են, որոնք կիրառվել են մեղանում՝ համապատասխանեցվելով հայոց Ծ-եակի երկու սկիզբներին: